

ՀԱՍՄԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ

ՓՈՍ ՎԱՆՔԸ ԵՒ ԳՐՉԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Նայ մշակույթի անբաժանելի մասն է գրչական արվեստը, որի գնահատման համար անհրաժեշտ է ձեռագրական ժառանգության ստեղծողների եւ գրչության կենտրոնների մասին վկայությունների ուսումնասիրությունը: Ներկա հոգվածում ներկայացրել ենք կիլիկյան հոգեւոր մշակութային կենտրոններից մեկի՝ անապատ կոչվող Փոս վանքի եւ գրչության ակումբի շուրջ 115-ամյա պատմությունը՝ այնտեղ ստեղծված ձեռագիր հիշատակարանների հայտնի եւ նորահայտ տվյալների, բանասիրական հետազոտությունների համադրմամբ եւ քննությամբ:

Հարկ է նշել, որ պատմական սկզբնաղբյուրները վանքի մասին տեղեկություններ չեն հաղորդում: ԺԳ.—ԺԴ. դարերի ձեռագիր աղբյուրներում վանքը բնութագրվել է որպես «մենաստան անապատն Փոս», «եղբայրություն սուրբ ուխտիս Փոսոյ», «հռչակաւոր անապատս, որ կոչի Փոս», «աստուածաբնակ ուխտ»: Համաձայն Բարսեղ գրչի վկայության՝ վանքը գտնվել է Կիլիկիայի Ցախուտ գավառում. «Բայց եղև զրաւ սորա, ի գաւառիս Ցախուտ կոչեցեալ, յաշխարհիս Կիւլիկեցւոց, յանապատի, որ կոչի Փոս»¹: Վանքի տեղորոշման մասին սա մեզ հայտնի միակ գրավոր տեղեկությունն է: Թերեւս որպէս վկայություն կարելի է դիտարկել նաեւ վանքի անունը: Ենթադրում ենք, որ «Փոս» անունը պատահական չի ընտրվել եւ առնչություն ունի վանքի ցածրագիր վայրում կառուցված լինելու հետ:

Սկզբնաղբյուրների սակավությունը հայագիտության մեջ ձեւավորել է հակասական կարծիքներ, ինչի հետեւանքով այն նույնացվել է տարբեր վանքերի հետ: Հիմք ընդունելով 1325 թ. օրինակված Ավետարանի գլխավոր հիշատակարանը, ուր միաժամանակ Դրազարկ եւ Փոս վանքերի առաջնորդ եւ վանահայր է հիշատակվում Հայրապետը (ՄՄ, Հ^մ 10 449,

¹ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ, Ն. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից (այսուհետ՝ Ցուցակ), Երուսաղէմ, 1967, էջ 11:

357ա, 359ա)², Ղեւոնդ Ալիշանը միացնում է վանքերը եւ համարում, որ Փոսը Դրազարկ վանքի անվանումներից է³: Ն. Ակինյանը հորին վանքին նվիրված հոդվածում առաջարկում է երկու ենթադրություն: Նախ՝ Փոս եւ հորին վանքերը նույնացնում է՝ նկատելով, որ «Փոս եւ հորին համազօր անուանակոչումներ են», եւ ձեռագրերը «գրուած են ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ Գրիգոր Լուսաւորչի եւ Սուրբ Նշանին»: Երկրորդ՝ առանձնացնելով վանքերը՝ հայագետը Փոսը միավորում է նույն ձորում, ըստ ձեռագիր աղբյուրների, մերձավորությամբ կառուցված հորին եւ Փերճեր վանքերի հետ՝ որպէս ընդհանուր վարչությամբ գործող վանական հաստատություններ⁴:

Վերոնշյալ ենթադրություններին անդրադառնալով՝ իր համոզումն է արտահայտել նաեւ Հ. Ոսկյանը Կիլիկիայի վանքերին նվիրված իր աշխատության մէջ⁵: Հեղինակի կարծիքով՝ Դրազարկ, Փոս, հորին վանքերը գտնվել են իրար մոտ, կապված են եղել Գեւորգ Մեղրիկի⁶ կանոնադրությամբ, ունեցել են վարչական, կալվածական, կա-

² Գրիգոր գրիչը գրում է. «Արդ, գրեցաւ Աւետարանս այս ի հռչակաւոր անապատս Դրազարկ... Յիշեսցիք եւ զշնորհաներկ քահանայն եւ զամենիմաստ առաջնորդ անապատիս՝ զՀայրապետ, եւ զեղբայր նորին՝ զկուսակրան քահանայն Սուքիաս, որ յոյժ փափագանաւ շանացին եւ յորդորեցին զմեզ յաւարտ հասուցանել զսա:Արդ, աղաչեմ զամենեւեան, որք պատահիք, զհեղհոգի հայրս սրբոյ եւ աստուածաբնակ Սուրբ ուխտիս Փոսոյ՝ եւ եղեւ զՀայրապետ հանդերձ եղբարքն իւրով եւ այլովք վերոյգրիցելովքս եւ զամենայն բնակիչք Սուրբ Ուխտիս Փոսոյ՝ զքահանայսն, եւ զկրանաւորսն, որք են այժմ կենդանի, եւ որք հանգուցեալ են, յիշեցէք ի Քրիստոս...» (տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ. դար», կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթեոսյան, Ա. Ղազարոսյան, մասն Ա., Երեւան, 2018, էջ 503):

³ Տե՛ս Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 234: Հայագետը գրում է. «Արդ յայտ է, թէ կամ ամենեւին նոյն եւ երկանուն էր հռչակաւորս մենաստան, եւ վասն գրիցն այսպէս եւս կոչեցեալ, կամ երկմասնեալ, որպէս եւ յայլ մեծամեծ վանորայս էին զատուցեալ կայանք միաբանակեցացն յառանձնակեցաց, այսինքն՝ վանք եւ անապատ»: Դրազարկ վանքին եւ գրչական ժառանգությանը նվիրված հոդվածում Ն. Մովսիսյանը «տեղագրական» բաժնում գրում է. «Դրազարկ, երբեմն կոչուած նաեւ Աւագ Վանք, եւ Փոսոյ Անապատ, կը գտնուէր Կիլիկիոյ մէջ, Սիսէն ոչ հեռու, դէպի արեւմուտք» (տե՛ս Ն. ԵՊՍ. ՄՈՎՍԻՍՅԱՆ, Դրազարկ, Սիսն, 1948, սեպտ.-հոկտ., էջ 265):

⁴ Տե՛ս Ն. ԱԿԻՆՅԱՆ, Չորս համանուն կաթողիկոսներ Կիլիկիոյ գահին վրայ: հորին վանք, «Աւետիք», 1940, էջ 43:

⁵ Տե՛ս Հ. ՈՍԿՅԱՆ, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ, 291–299: Հեղինակը Փոսին նվիրված բաժնում ներկայացրել է անապատում գրված իրեն հայտնի 7 ձեռագրերի հիշատակագրությունները:

⁶ Տե՛ս ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց անձնանունների բառարան, հտ. 1, Երեւան, 1942, էջ 460–461: ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ, Երեւան, 1961, էջ 110:

նոնական կապեր եւ հարաբերություններ, որոնք էլ ապահովել են առաջնորդների եւ միաբանների՝ տարբեր վանքերում համատեղած գործունեությունը⁷:

Վանքերի նույնացման վարկածների առնչությամբ ներկայացնենք որոշ դիտարկումներ. Փոս վանքի գրչատանը գրված մատյանների հիշատակարանները մեզ չեն հաղորդում տեղեկություններ վանքի եւ շրջակայքի, մասնավորապես մերձակա վանքերի մասին: Կարծում ենք՝ նրանց գոյության վերաբերյալ փոսեցի գրիչները կտեղեկացնեին, ինչպես խորինցի գրիչներն են հստակ ներկայացնում Խորին վանքի տեղանքի եւ միջավայրի նկարագրությունը: Փաստենք, որ ի տարբերություն Խորին եւ Դրազարկ վանքերի, որոնք իրենց պատմության ընթացքում հայտնի են տարբեր անվանաձևերով, ինչպես Առակելի կամ Առակլիի անապատ, Ավագ վանք եւ այլն⁸, Փոս անապատը մեզ հայտնի սկզբնաղբյուրներում հիշվում է անփոփոխ՝ Փոս անունով:

Ձեռագիր սկզբնաղբյուրներում Փոս վանքի համակառուցում հիշատակվում են Սուրբ Աստվածածին կամ Տիրամոր տաճարը, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Սուրբ Նշան եւ Սուրբ Կաթողիկե եկեղեցիները: Փաստացի տեղեկություններ չկան վանքի հիմնադրման եւ նրա մաս կազմող եկեղեցիների կառուցման ժամանակի, ճարտարապետական տվյալների եւ հարդարանքի մասին: Ենթադրում ենք, որ վանքի հնագույն եւ գլխավոր միավորները՝ Սուրբ Աստվածածին եւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները հիմնվել եւ ավարտին են հասցվել մինչեւ ԺԳ. դարի 20-ական թվականները, իսկ հարակից շինությունները՝ ԺԴ. դարի սկզբին: 1319 թ. գրիչ Ստեփանոսն իր օրինակած Ավետարանի հիշատակարանում, որն արտագրել է «ի յանապատս, որ կոչի Փոս, ընդ հովանեաւ Կաթողիկէիցն եւ Սուրբ Նշանին», խնդրում է հիշել «զշինաւղքն սուրբ Եկեղեցւոյս»⁹: Եկեղեցաշինարարների հիշատակումը թույլ է տալիս ենթադրել,

⁷ Հ. ՈՍԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 154, 291–292:

⁸ Տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», կազմեցին Թ. Հակոբյանը, Ս. Մելիք-Բախշյանը, Հ. Բարսեղյանը, հտ. 2, Երևան, 1988, էջ 149, 796–797, Բ. ԿԻՒԼԵՍԵՐԵԱՆ, Յուցակ ձեռագրաց Անկիրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 897:

⁹ Թ. ԳՈՒՇԱԿԵԱՆ, Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա (այսուհետ՝ Յուցակ), Վիեննա, 1961, էջ 23: Հիշատակարանը նույն բովանդակությամբ տես Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց (այսուհետ՝ Յուցակ), հտ. Ժ., Երուսաղէմ, 1990, էջ 111–112:

որ ձեռագրի գրչության ժամանակ Ս. Նշան եւ Կաթողիկե եկեղեցիների շինարարական աշխատանքները նոր են ավարտվել կամ գեռեւս ընթանում են:

Վանքը գտնվել է ոչ միայն եկեղեցիների, այլ նաեւ Սուրբ Նշահարաց հովանավորության տակ: Մասունքները պահվել են գլխավոր տաճարում, հավանաբար հատուկ ստեղծված մասանց պահպաններում: Հովանավորների մասին Գրիգոր գրչի՝ 1222 թ. օրինակած Ավետարանի հիշատակարանում գրված է. «...յանապատիս Փոս կոչեցեալ, ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնիս եւ այլ սքանչելագործ սրբոյ ի մէջ...»¹⁰: Հովանավորների մասին է վկայում Բարսեղ գրչի՝ 1276 թ. հիշատակարանը. «...յանապատիս, որ կոչի Փոս,ընդ հովանեաւ Սրբոյ Աստուածածնիս, եւ Սրբոյն Գրիգորի, եւ Յովհաննու Մկրտչի, եւ սրբոց առաքելոց Պետրոսի եւ Պաւղոսի եւ այլ բազմահաւաք Սուրբ նշանացս եւ աստուածընկալ Սուրբ Նշահարացս»¹¹: 1309 թ. Հայրապետ գրիչն իր արտագրած Ավետարանի հիշատակարանում գրում է. «...ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Գրիգորի Լուսաւորին (այսպ.) մերոյ...»¹²: Հովհաննես գրիչը (ՄՄ, Հ^Վ 6504, 328բ) եւ Թորոս արեղան¹³ իրենց օրինակած մատյանների հիշատակարաններում նույնպէս թվարկում են վանական համալիրի եկեղեցիները:

Վանքից մեզ հասած ձեռագրերը սակավաթիվ են՝ 11 գրչագիր: Սույն ուսումնասիրության շնորհիվ գիտական շրջանառության մեջ է գրվում 4 գրչագիր՝ ի հավելումն մինչ օրս հայտնի 7-ի: Մատյաններից ամենահինը գրվել է 1222 թ., իսկ մեզ հայտնի վերջին մատյանը՝ 1337 թ.: Նկատելի է, որ 1223—1274 թթ. եւ 1276—1308 թթ. ընկած ժամանակահատվածներում անապատում օրինակված ձեռագրեր մեզ չեն հասել: Սակայն վկայությունները փաստում են, որ վանքը, հավանաբար նաեւ գրչատունը շարունակել են իրենց գործունեությունը նաեւ այդ տարիներին: 1253 թ. Հռոմկլայում Կոստանդին կաթողիկոսի հրամանով Հովհաննես գրչի արտագրած Ավետարանում Կոստանդինը գրում է. «Եւ իմ տեսեալ զմենաստան անապատն զՓոսն, եւ միաբանեցի զիւրեանք ի մի պաշտաւն եւ ի

¹⁰ Տէս "A catalogue of Medieval Armenian manuscripts in the United States", by A. Sanjian, Los Angeles-London (այսուհետ՝ Catalogue), 1976, էջ 73—76:

¹¹ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ, Ն. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Յուցակ, էջ 11:

¹² Ա. ՍԻՐՄԵՏԵԱՆ, Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Քառասուն մանկունք եկեղեցւոյ Հալէպի (այսուհետ՝ Յուցակ), թ. 47, Երուսաղէմ, 1335, էջ 93:

¹³ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Յուցակ, հտ. 2., Երուսաղէմ, 1972, էջ 349—350:

մի սեղան, եւ առին իւրեանց սահման ըստ կարեաց իւրեանց, եւ ես միաբանեցայ ընդ նոսա....»¹⁴:

Փոս անապատում օրինակված եւ մեզ հասած առաջին ձեռագիրը վկայում է, որ արդեն 1222 թ. վանքը գործել է որպէս «եղբայրանոց»՝ միաբաններով եւ միայնակեցության կյանքով ապրող վանականներով¹⁵: Նրանց մասին իրենց օրինակած մատյանների հիշատակարաններում տեղեկություններ են հաղորդում փոսեցի գրիչները: Վերջիններս աղաչում են հիշել «զամենայն բնակիչս սրբոյ ուխտիս Փոսոյ զքահանայսն եւ զկրանաւորսն.... եւ զմիաբանեալսն ի սա»¹⁶, մենաստանի միաբաններին՝ Սիմեոն քահանային (1222 թ.), Բարսեղ քահանային (1275 թ.), Թորոս օգնականին (1309 թ.), Սարգիս, Ավագ եւ Առաքել քահանաներին (1329 թ.), Ստեփանոս, Կոստանդին, Գրիգոր, Իշխան, հանգուցյալ Կոստանդին քահանաներին (1335 թ.), «եւ ծնողաց, եւ սնուցողաց, եւ ուսուցողաց»¹⁷, «զամենեւեան, որ զաւգնական են լեալ»¹⁸:

Վանքում արտագրված ձեռագրերի հիշատակարանները հաղորդում են վանահայրերի սակավաթիվ անուններ: 1222 թ. Գրիգոր գրիչը գնահատանքով է խոսում վանքի առաջնորդի մասին՝ բնութագրելով նրան որպէս «յընդիր առաջնորդի, որ զպէտս մարմնականս անթերի պահէր եւ յորդորէր ի Գիրս»¹⁹: Գրի աղճատվածության պատճառով նրա անունն անհայտ է մնացել: Փոս անապատի առաջնորդ հայրերից հիշատակվում է Հայրապետի անունը: 1324 թ. «յառաջնորդութեան այսմ անապատի Հայրապետի» օրինակվել է Նարեկ²⁰: Մեկ այլ ձեռագրի հիշատակարանում նորից նշվում է «հեզահոգի հայրս աստուածաբնակ ուխտիս Փոսոյ» Հայրապետը, որի պատվերով է գրվել Ավետարան մատյանը (ՄՄ, Հ^մ 10449, 359ա, բ): Վանքի առաջնորդներից Կոստանդինի եւ ուխտի եկեղեցապաններից Հայրապետ փակակալի անունները հաղորդում է 1319 թ. գրված մատյանի հիշատակարանը²¹: Վանքն առաջնորդել է նաեւ

¹⁴ Ա. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար, Երեւան 1984, էջ 272:

¹⁵ Կարելի է ենթադրել, որ Փոս վանքը հիմնադրվել է 1222-ից շատ տարիներ առաջ:

¹⁶ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Յուցակ, հտ. Ժ., էջ 111:

¹⁷ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ, Ն. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, Յուցակ, էջ 11:

¹⁸ Տէս "Catalogue", էջ 75:

¹⁹ Անդ:

²⁰ Հ. ՈՍԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 295:

²¹ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Յուցակ, հտ. Ժ., էջ 111—112:

եպիսկոպոսի աստիճան ունեցող «սրբասէր» Ստեփանոսը: Այս մասին է հաղորդում 1329 թ. օրինակված Ժողովածուի հիշատակարանը (ՄՄ, Հ^մ 3678, 423ա):

Անապատի գրիչները հիշում են նաեւ գիրքը կազմող եւ նյութը մշակող՝ թուղթ կոկող հոգեւոր եղբայրներին: Ներսէս գրիչը հիշում է Թորոս միայնակյացի՝ ձեռագրի նյութը մշակողին, եւ Մխիթար քահանային՝ կազմարարին²², իսկ Ստեփանոսը՝ «մանկագոյն» Հովհաննէս քահանային, որ «աշխատեցաւ ի կոկել թղթոյս»²³: Հալեպի հավաքածուի Հ^մ 47 ձեռագրում պահպանվել է կազմարար Հակոբ Երեցի հիշատակութիւնը. «Ես զմեղաւք դատապարտեալ, զկազմող սորա զՅակոբ Երէց, զորդի Մեծպարոնին, եւ զեղբայրն զՅովհաննէս եւ հանգուցեալն ի Քրիստոս, զմիւս եղբայրս իմ զԿոստանդին եւ զամենայն ծնաւդս իմ աղաչեմ յիշել ի Տէր»²⁴:

Մեզ հայտնի վկայութիւնների համաձայն՝ շուրջ տասը տարի Փոս անապատի գրատանն է աշխատել եւ ստեղծագործել Մխիթար նկարիչը: Մեր օրերն են հասել վանքում կատարած նրա աշխատանքներից երկուսը: Մխիթարը գծել եւ «նկարակերտեալ» է 1319 թ. օրինակված թղթյա Ավետարանը: Գրիչն աղաչում է հիշել «սակաւ աշխատողիս ի ծաղկել սորա Մխիթարայ»²⁵: Իսկ 1329 թ. արտագրած Ավետարանը նա ոչ միայն նկարել է, այլեւ կազմել: Ձեռագրի գլխավոր հիշատակարանում Մխիթարը բնութագրվում է որպէս «շնորհազարդ» քահանա²⁶: Փոսում 1335 թ. արտագրված մատյանը ծաղկել է Սարգիս քահանան (ՄՄ, Հ^մ 6504): Ձեռագրում պահպանվել է նկարչի հիշատակագրութիւնը. «...ծաղկիւ զարդարեցի զսուրբ Աւետարանս»²⁷:

Արդյոք վանքին կից գործել է գրչութեան դպրոց, հայտնի չէ: Ձեռագրերի ուսումնասիրութիւնից նկատելի է, որ Փոս վանքի գրիչները

²² Թ. ԱՐՔԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆ, *Յուցակ*, էջ 23:

²³ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, *Յուցակ*, հտ. Ժ., էջ 111–112:

²⁴ Ա. ՍԻՐՄԷՆԱՆ, *Յուցակ*, էջ 94:

²⁵ ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆ, *Յուցակ*, էջ 23: Թորգոմ արքեպիսկոպոսը ծանոթագրում է. «Խորանք՝ միջին նրբութեամբ, լուսանցազարդ՝ բաւական ընտիր»:

²⁶ Անդ, էջ 24:

²⁷ Լ. Խաչիկյանը հավանական է համարում, որ Սարգիս նկարիչը նշանավոր մանրանկարիչ Պիծակն է (տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ. դար», կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթեոսյան, Ա. Ղազարոսյան, մասն Բ., Երեւան, 2020, էջ 219: Ա. Գեւորգյանը ձեռագիրն ընդգրկել է Սարգիս Պիծակի աշխատանքների ցանկում (տե՛ս Ա. ԳԵՈՐԳԵԱՆ, Հայ մանրանկարիչներ. Մատենագիտութիւն, Գահիրէ, 1998, էջ 655):

տիրապետել են իրենց արվեստի կանոններին²⁸։ Ուշագրություն է արժանի այն փաստը, որ գրիչները կարեւորել են անսխալ եւ ճշգրիտ գաղափար օրինակների ընտրությունը։ Գրչատան ձեռագրերն արտագրվել են «յընտիր»²⁹ եւ «լավ եւ յընտիր»³⁰ օրինակներից, որոնց պատվիրատուների շարքում հիշվում են եւ գրասեր վանահայրերը, եւ միաբանության հոգեւոր եղբայրները։

Վանքի գրատան մատենադարանը հարստացել է ոչ միայն տեղում կատարված օրինակումներով, այլ նաեւ նվիրաբերված թանկարժեք ձեռագրերով, որոնք հավանաբար պահվել են հատուկ գրապահոցներում։ Նման ձեռագրի մասին է պատմում Կոստանդին կաթողիկոսի հիշատակարանը. «Եւ՝ Կոստանդին ծառայիցն Աստուծոյ ծառայ եւ ողորմածութեամբն Աստուծոյ կաթողիկոս ամենայն Հայոց, որ ետու գրել զԱւետարանս զայս, յաղագս անձին իմոյ՝ յընտիր եւ ի լաւ աւրինակաց, եւ ոսկով եւ արծաթով զարդարեցի։ Եւ իմ տեսեալ զմենաստան անապատն զՓոսն.... պարգեւեցի նոցա զԱւետարանս զայս, զոր ինձ ստացել էի.... զի անփոփոխ մնացէ ի սուրբ ուխտս, եւ մի ոք իշխեսցէ հանել զսա ի սուրբ անապատէս, զի մի անիծիւք պատժեսցի»³¹։

Փոս անապատի գրչատանը գրված ձեռագրերից հինգն Ավետարան է։ Ամենահինն ընդօրինակել է Գրիգոր գրիչը՝ վանքի քահանա Սիմեոնի պատվերով 1222 թ.՝ Կոստանդին Հայոց կաթողիկոսի եւ Փիլիպպոս թագավորի օրոք։ Հիշատակարանում գրիչն իրեն անվանում է «ողբալիս եւ հոգով մեռեալս», «փցուն մտաւք եւ գրչաւ» եւ աղաչում «չլինել մեղադիր խոշորութեան գրոյս», քանի որ մատյանն օրինակել է պատմական «անհանգիստ» ու անապահով ժամանակաշրջանում՝ «յայս դառն ամբս»³²։ Եւ ստիպված «ի տեղիս տեղիս փոփոխելով»՝ ավարտել է մատյանի գրչությունը Փոս անապատում։ Ականատեսի վկայությամբ գրիչը նկարագրել է Լեւոն թագավորի մահից հետո Կիլիկիայի հայկական պետականության

²⁸ ԺԲ. եւ ԺԳ. դարերում գրչության արվեստի ուսուցման մեջ գրչագրեր ընդօրինակելու համար կարեւոր դեր են կատարել Արիստակես գրչի եւ Գեւորգ Սկեւացու քերականական աշխատություններում հայոց լեզվի ուղղագրության, վանկատման, կետագրության, գրադարձության, առոգանության կանոնների ու օրենքների մշակումն ու կանոնավորումը (տե՛ս Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Քերականական եւ ուղղագրական աշխատությունները հին եւ միջնադարյան Հայաստանում (5–15-րդ դդ., Երեւան, 1954, էջ 206)։

²⁹ Տե՛ս «Catalogue», էջ 75։

³⁰ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Ցուցակ, հտ. Զ., էջ 350։

³¹ Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 272։

³² Տե՛ս «Catalogue», էջ 75։ Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, նշ. աշխ., էջ 129–130։

առջեւ ծառացած դժվարությունները. «....զի անաւրէնք յամենայն կողմանց գերեցին զաշխարհս Կիլիկեցւոց. զի թագաւոր ոչ գոյր, եւ իշխանսն անհնազանդ իւրեանց, մինչ Աստուած կամեցաւ եւ թագաւոր ետ, եւ սակաւ մի խաղաղեցաւ յայսմ դառն ամբս»³³։ Գահի շուրջ սկսված վեճերը հարթվում են «....ի թուականիս ՈՀԱ (1222), եւ կաթողիկոս Հայոց Կոստանդին, եւ թագաւոր Փիլիպպոս, յայսմ ամի հաստատեցան յաթոռս։ Քրիստոս Աստուած ըստ կամաց Իւրոց հաստատուն պահեսցէ....»³⁴։ Հավանաբար ընդօրինակումից հետո ձեռագրի վրա «սակաւ» աշխատել է Մարգարեն՝ կատարելով հետեւյալ ավելացումները. «....ի համարքն գրել, եւ ի թուխթս, որ պակասէր՝ ես կտրեցի ու գրեցի»³⁵։

Փոս վանքին պատկանող հաջորդ Ավետարանը Հայրապետ եւ Հովհաննէս գրիչների համատեղ աշխատանքն է։ Թղթյա մատյանը գրվել է 1309 թ.՝ «ի թագաւորութեան Աւշնի եւ ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեայ», «մաքրամիտ եւ ընտիր կուսակրան քահանայի»՝ Պետրոսի եւ եղբոր՝ Վասիլի պատվերով³⁶։ ԺԳ. դարասկզբին հատկապես Օշին թագավորի (1308–1320 թթ.) եւ բարձրաստիճան հոգեւորականության վարած լատինամետ քաղաքականությունը հանգեցնում է հայ վանականների եւ հոգեւորականների անհնազանդությանը։ Երկրում միարարության դեմ տարվող պայքարի կողմնակիցները ենթարկվում են բռնությունների, հալածանքների եւ աքսորի։ Հայրապետ գրիչը՝ որպէս այդ պայքարի աշխույժ մասնակից, հիշատակարանում հայտնում է 1309 թ. թագավորի եւ կաթողիկոսի գործադրած դաժան բռնաճնշումների՝ «ոչ հնազանդելոյ աւանդիցն Քաղկեդոնի» եւ իր ու համախոհների աքսորի մասին. «.... յայսմ ամի աքսորեցին զմեզ ի կղզւոջն Կիպրոսի»³⁷։ Ավետարանը զարդարված է բազմաթիվ լուսանցազարդերով, խորաններով եւ մանրանկարով։ Մանրանկարչի անունն անհայտ է։

³³ Տէս “Catalogue”, էջ 75:

³⁴ Անդ։ Նկարագրված դեպքերի մասին է պատմում Կիրակոս Գանձակեցին (տե՛ս ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, նշ. աշխ., էջ 188–189)։ Հայոց գահաժառանգական խնդիրների մասին տե՛ս Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ, Խաչակիրները եւ հայերը, հտ. Բ., Երեւան, 2007, էջ 210, 236–253:

³⁵ Տէս “Catalogue”, էջ 76:

³⁶ Ա. ՍԻՐՄԷԵԱՆ, Յուցակ, էջ 93։ Յուցակագրի կարծիքով՝ ձեռագիրն արտագրվել է հնագույն գաղափար օրինակից։ Հետագայի հիշատակարանը հուշում է, որ ձեռագիրը 1702 թ. հանգրվանել է Հայեպի Ս. Քառասունք մանկունք եկեղեցում։ Հիշատակարանը տե՛ս «ԺԳ. դարի ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., էջ 164–165:

³⁷ Անդ։ 1309 թ. Սիս քաղաքում ճնշված խռովությունների մասին տե՛ս Է. ԲԱՂԿԱՍՅԱՆ, Գեորգ Սկեւոացու «Վարքը», «Բանբեր մատենադարանի», հ. է., Երեւան, 1964, էջ 431–432:

Պողոս քահանայի «բազում փափաքանօք եւ ըղձալի սրտիւ» 1319 թ. արտագրվել է «ի յանապատս, որ կոչի Փոս» խորաններով եւ ընտիր լուսանցազարդերով նկարակերտ թղթյա Ավետարան³⁸։ Գրիչ Ստեփանոսը հիշում է ծնողներին, հարազատներին «ամենայն աշխատելոցս ի գիրս յայս» եւ սուրբ ուխտի միաբաններին։

Նկարազարդ թղթյա հաջորդ Ավետարանն օրինակվել է Ներսես գրչի ձեռքով եւ «երջանիկ քահանայ» Գրիգորի պատվերով՝ «իւր յիշատակ եւ ի վայելում երկուց որդւոց իւրոց Թադէոսի եւ Սարգսի» 1329 թ.՝ «ի թագաւորութեանս Հայոց Չորրորդ Լեւոնի եւ ի հայրապետութեան տեառն Յակոբայ»³⁹։

Գրիչը հիշում է իր հարազատ եղբայրներին՝ տեր Թորոսին եւ Հովհաննես քահանային։

Փոս վանքի գրատանը 1335 թ. արտագրված Ավետարանի գլխավոր հիշատակարանը փաստում է, որ թղթյա մատյանը գրվել է «ի թագաւորութեան Հայոց Լեւոնի, որդոյ Աւշին թագաւորի»՝ Մարտիրոս քահանայի «բազում փափաքանաւք եւ ըղձալի սրտիւ» (ՄՄ, հհ 6504, 328բ)⁴⁰։ Հով[հ]ան[ն]ես գրիչը խնդրում է շմեղադրել իրեն, քանի որ «այս չափ էր կար մեր» (328բ)։ Ձեռագրում հիշատակում է թողել նաեւ ծաղկող Սարգիս քահանան (329բ)։

Մեզ են հասել փոսեցի գրիչների տարբեր բովանդակութեամբ ձեռագրերի ընդօրինակութեւններ նույնպես։ 1275 թ. Բարսեղ վանականն իր համար օրինակել է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գործը⁴¹։ Գրիչն իրեն համարում է «անարհեստ», «անարժան եւ բազմամեղ»։ Բարսեղը դիմում է ընթերցողին՝ հայցելով «թողութիւն մեղաց», քանի որ այդ պատճառով է աշխատել, այլ «ոչ վասն մարմնաւոր շահի»։ Մեկ այլ «Նարեկ» էլ արտագրել է Ստեփանոսը 1324 թ. «ի հոշակաւոր անապատն, որ կոչի Փոս, ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ Դրազարկի, եւ ի

³⁸ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, *Յուցակ, հտ. Ժ.*, էջ 111–112. «ԺԴ. դարի ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., էջ 386–387։

³⁹ ԹՈՐՔՈՄ ԱՐՔԵՊՍ. ԳՈՒՇԱԿԵԱՆ, *Յուցակ, էջ 23–24*. «ԺԴ. դարի ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ., էջ 58–59։

⁴⁰ Ձեռագրի կազմը կոստղապատ է՝ արծաթյա երկու խաչով, հինգ վարդյակներով, մակագրութեամբ (տես «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», կազմեցին Օ. Եգանյանը, Ա. Զեյթունյանը, Փ. Անթաբեյանը, հտ. Բ., Երեւան, 1970, էջ 334. «ԺԴ. դարի ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ., էջ 219)։

⁴¹ Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ, Ն. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, *Յուցակ, էջ 10–11*։

թագաւորութեան Հայոց Լեւոնի, եւ յառաջնորդութեան այսմ անապատի Հայրապետի»⁴²:

Սուրբ ուխտի միաբան Ստեփանոսը⁴³ գրչագրել է Ճառնտիր (ՄՄ, Հ^մ 866)՝ Թադեոս քահանայի եւ Թորոսի խնդրանքով, «որ աւգնական եղեւ ի գիրս»: Գրչութեան ժամանակը անհայտ է եւ թվագրվում է ԺԴ. դարով⁴⁴:

Հաջորդ ձեռագիրը ժողովածու է, բովանդակում է Է. դարի փրկիսոփա, աստվածաբան Հովհան Կլեմաքոսի «Սանդուղք աստուածային ելից» երկը, Հովհաննես Աստվածաբանի «Բանք վասն միանձանց եւ անապատականաց», «Յաղագս պատրաստութեան շաբաթուն» ճառերը եւ աղոթք: Գեղեցիկ, մանր բոլորգրով արտագրված թղթյա մատյանը պահվում է մաշտոցյան Մատենադարանում (ՄՄ, Հ^մ 3678): Վարդան «ամենագովելի» քահանայի պատվերով ձեռագրի օրինակումը Հայրապետ գրիչն ավարտել է 1329 թ.՝ շուրջ 120 օրում⁴⁵: Գրիչը գրում է. «....ի տաւնի Համբարձման Տեառն սկսեալ եւ ի Խաչավերաց տաւնիս վճար եղեւ ի գրելոյ» (335բ): Գաղափար օրինակը պատկանել է Պետրոսին, որը «յաւժար կամաւք ետ»: Ինչպես վկայում է գլխավոր հիշատակարանը, վերջին ճառը՝ «Միաշաբաթի Յարութեան Տեառն», արտագրել է գրչի քեռորդին՝ Թորոս քահանան (423ա): Հայրապետը հիշատակարանում հայտնում է, թե Հովհաննես Աստվածաբանի գիրքը, որը «նոր է թարգմանած յասորոց ի մերս», տեսել է Ատոմ ճգնավորի մոտ՝ «ի վանս Զարգառնոյ»⁴⁶.... որ էր բերեալ զսա ի թաբաւրականէն» (424ա): Վերջինս չի ցանկացել օրինակել գիրքը, քանի որ «....ահ եղեւ, զարմանալի իրս է ի պատմել.... զի ի գիրս գիտութիւն բազում էր, եւ ես երկնչէի» (424ա): Հայրապետը, գնահատե-

⁴² Հիշատակարանի մասին ծանոթագրում է Հ. Ոսկյանը՝ նշելով, որ այն վերցված է «Համամճեանի Գաղատիայի հայերէն ձեռագրաց ցուցակէն» (տե՛ս Հ. ՈՍԿԵԱՆ, նշ. աշխ., էջ 295): Հիշատակարանն ընդգրկված չէ ԺԴ. դարի ձեռագրերի հիշատակարանների համապատասխան թվաշարքում:

⁴³ Հայտնի չէ, թե Ստեփանոսը եւ «Նարեկ»-ի գրիչը նույն անձն են:

⁴⁴ Տե՛ս «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», կազմեցին Օ. Եգանյանը, Ա. Զեյթունյանը, Փ. Անթաբյանը, հտ. Ա., Երեւան, 1965, էջ 428: ԺԴ. դարի հիշատակարանների Ա., Բ. մասերի աղբյուրների ցանկերում ձեռագիրը, նաեւ հիշատակարանը ընդգրկված չեն:

⁴⁵ Ըստ այս հաղորդման՝ գրիչը շուրջ 120 օրում ընդօրինակել է 334 թերթ՝ օրական մոտ 3 թերթ (տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ. դար., մասն Բ էջ 58, ծնթ. 1»):

⁴⁶ Զարգառնո, Զարգառնո վանքը հիշատակվում է Արեւմտյան Հայաստանի Խարբերդի շրջանի Զարգարիչ գյուղի մոտ: Կառուցվել է հավանաբար ԺԲ. դարում (տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. Ա., Երեւան, 1986, էջ 6):

լով ձեռագրի կարեւորությունը, գրչությունն սկսել եւ ավարտին է հասցրել «վասն աւգտի.... իմ եւ այլոց» (424ա):

1331 թ. «ի սուրբ ուխտս Փոս կոչեցեալ» ներսես գրիչն արտագրել է «Գործքս Ալեքսանդր թագաւորին»՝ «ի հայրապետութեան տեառն Յակոբայ, եւ ի թագաւորութեանս Հայոց Չորրորդ Լեւոնի» (ՄՄ, Հ^ր 6273, 139)⁴⁷:

Փոս անապատից պահպանված վերջին ձեռագիրը Շարական է, որը վարժ բոլորգրով օրինակել է Թորոս արեղան Գրիգոր գրագրի օրինակից 1337 թ.՝ Լեւոն թագավորի եւ Հակոբ հայրապետի ժամանակաշրջանում: Գրիգորը հիշատակարանում բնութագրվում է «խուլ» մականվամբ⁴⁸:

Փոս վանքի գրատանը վարպետությամբ եւ գեղեցիկ բոլորգրով օրինակված ձեռագրերը հայ մշակութային ժառանգության անգնահատելի մաս են կազմում: Այդ մատյանների հիշատակարանները պատմում են իրենց ստեղծողների, վանքի պատմության ու գրչատան գործունեության մասին՝ ուրվագծելով եղբայրության կազմակերպված կյանքը եւ հատկապես այն միջավայրը, որն ապահովել է մշակութային արդյունավետ գործունեությունը: Կարելի է ենթադրել, որ վանքի պատմության ընթացքում ստեղծված ձեռագրերի քանակը շատ ավելին է եղել: Հուսով ենք՝ Կիլիկիայի վանքերի եւ գրչության կենտրոնների հետագա ուսումնասիրությունները կլրացնեն Փոս վանքի եւ գրատան գործունեության մասին տեղեկությունները:

РЕЗЮМЕ

Статья посвящена почти 115-летней истории монастыря Пос, одного из духовно-культурных региональных центров Киликийской Армении XIII—XIV веков: деятельности писцов, миниатюристов, служителей и оценке наследия скриптория. Исследование основано на рукописных источниках Института древних рукописей Матенадаран имени св. Месропа Маштоца, каталогах армянских рукописей, а также результатах историко-филологических исследований.

⁴⁷ Համաձայն Ղ. Փիրղալեմյանի ծանոթագրության՝ ձեռագիրը պատկանել է վանեցի Խալափյան Համբարձումին (տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԴ. դար», մասն Բ., էջ 109, ծնթ. 2):

⁴⁸ Ն. ՊՈՂԱԲԵԱՆ, Յուզակ, հտ. 2., էջ 350: Ձեռագիրը նորոգել է Մանվել գրիչը 1648 թ. («ԺԴ. դարի ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ., էջ 292):

Впервые были уточнены, дополнены и введены в научный оборот 11 рукописей из монастыря Пос (ранее были известны 7 рукописей). Выявлены имена писцов и миниатюристов, результаты их деятельности, обстоятельства переписки ими рукописей. Исследование также раскрывает некоторые аспекты исторических и культурных процессов того времени.

S U M M A R Y

The article is dedicated to the almost 115-year old history of the Monastery of Pos, one of the spiritual-cultural and regional centers of Cilician Armenia in the 13th—14th centuries, to the activities of monastic scribes, miniaturists, members of the congregation and the assessment of the manuscript heritage. The research is based on the manuscript sources of Mashtots Matenadaran, catalogues of Armenian manuscripts, as well as the results of historical and philological researches.

For the first time, 11 manuscripts (previously, 7 manuscripts were known) of the Monastery of Pos were studied, supplemented and introduced into scientific circles. The names of scribes and miniaturists, their activities, circumstances of the creation of manuscripts are revealed. The study also discloses some aspects of historical and cultural processes of that time.

